ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«__»_____2024թ. **N_____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 11-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. «Երևան քաղաքի գլխավոր հատակագիծ» հիմնադրույթային փաստաթղթի նախագծի վերաբերյալ տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրել լիազոր մարմնին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 13-ի «Երևան քաղաքի գլխավոր հատակագծի նախագծի մշակման նախագծային առաջադրանքը հաստատելու մասին» N 623-Ա որոշմամբ հաստատվել է Երևան քաղաքի գլխավոր հատակագծի նախագծի մշակման նախագծային առաջադրանքը:

Երևանի քաղաքապետի՝ (08.04.2024թ., գրանցման համար Ն/19080-24) «Երևան քաղաքի գլխավոր հատակագիծ» հիմնադրույթային փաստաթղթի վերաբերյալ ծանուցում և առաջին հանրային լսում կազմակերպելու մասին հանձնարարականի համաձայն՝ կատարվել է շահագրգիռ հանրության ծանուցում, հիմնադրույթային փաստաթղթի նախագծի վերաբերյալ ծանուցումն օրենքով սահմանված կարգով տեղադրվել է «Առավոտ» օրաթերթում և Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում:

«Երևան քաղաքի գլխավոր հատակագիծ» հիմնադրույթային փաստաթղթի նախագծի վերաբերյալ Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի նստավայրում օրենքով սահմանված կարգով կազմակերպվում է առաջին հանրային լսումը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները, այն է՝ համայնքին առնչվող հիմնադրույթային փաստաթղթի նախագծի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ համայնքի ավագանու կողմից նախնական համաձայնության կամ անհամաձայնության տրամադրումը:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ հիմնադրույթային փաստաթուղթը՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող փաստաթուղթն է (ռազմավարություն, հայեցակարգ, բնական ռեսուրսների օգտագործման սխեմա, ծրագիր, պլան, հատակագիծ, քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ) կամ փաստաթղթի փոփոխություն՝ հաստատված Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների այլ իրավական ակտերով:

«Քաղաքաշինության մասին» օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքաշինական փաստաթղթերը քաղաքաշինական գործունեության պետական կարգավորման միջոց են և բաժանվում են երկու խմբի՝ քաղաքաշինական ծրագրային (կամ տարածական պլանավորման) փաստաթղթեր և ճարտարապետաշինարարական

նախագծային փաստաթղթեր: Քաղաքաշինական ծրագրային (կամ տարածական պլանավորման, այսուհետ՝ տարածական պլանավորման) փաստաթղթեր են՝ Հայաստանի Հանրապետության համայնքների գլխավոր հատակագծերը:

Հիմնադրույթային փաստաթղթի նախագծի վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու կարգը սահմանված է Օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ:

Հիմք ընդունելով Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները՝ Երևան քաղաքի ավագանու համաձայնեցմանն է ներկայացվում ««Երևան քաղաքի գլխավոր հատակագիծ» հիմնադրույթային փաստաթղթի նախագծի վերաբերյալ նախնական համաձայնություն տրամադրելու մասին» որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ